Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

‘ ’ ----------- 2017 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի

N 1085-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի <<Պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողների (ներառյալ` ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր չկնքած զինծառայողների) ու ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների և սովորողների դրամական ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին>> N 1085-Ն որոշման (այսուհետ` որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում, 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում, 1-ին և 2-րդ հավելվածների վերնագրերում, 1-ին հավելվածի 1-ին և 2-րդ կետերում <<ու ռազմաուսումնական>> բառերը փոխարինել <<, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած շարքային կազմի պարտադիր զինծառայողների, ինչպես նաև

ռազմաուսումնական>> բառերով.

2) որոշման նախաբանում <<Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի>> բառերը փոխարինել <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածի>> բառերով.

3) որոշման 1-ին հավելվածում՝

ա. 2-րդ կետի 1-ին ենթակետում <<համար>> բառից առաջ լրացնել <<և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած շարքային կազմի պարտադիր զինծառայողների>> բառերը,

բ. լրացնել նոր 3.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<>,

գ. 5-րդ կետում <<ռազմաուսումնական>> բառից առաջ լրացնել <<Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած շարքային կազմի պարտադիր զինծառայողների,>> բառերը, իսկ <<Զինվորական ծառայություն անցնելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի>> բառերը փոխարինել <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի>> բառերով.

4) որոշման 2-րդ հավելվածում լրացնել նոր 2.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<

| NN<br>ը/կ | Զինվորական կոչումը | Ամսական չափը (դրամ) |
|---|---|---|
| 1. | Ավագ | 45 000 |
| 2. | Ավագ սերժանտ | 43 000 |
| 3. | Սերժանտ | 40 000 |
| 4. | Կրտսեր սերժանտ | 38 000 |
| 5. | Եֆրեյտոր | 36 000 |
| 6. | Շարքային | 35 000 |

>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: